ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՂ ԱԼԱՇԿԵՐՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ГУБЕРНИЯ
СЕЛО. АЛАШКЕРТ

VILLAGE ALASHKERT MARZ OF ARMAVIR REPUBLIC OF ARMENIA

Արմավիրի մարզպետ՝
Պարոն Ա. Ղահրամանյանին

01.12.2014թ.
ԹԻՎ 132

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից ուղարկվում է Ալաշկերտ համայնքի ավագանու 24.11.2014թ. կայացած թիվ 11 նիստի որոշումները:

Առդիր 7 էջ:

Համայնքի ղեկավար՝ Կ. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ալաշկերտ, (091) 424045, (098) 42404, alashkert.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014թվականի N 36

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով.

1. Հաստատել ավագանու 2014 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 11 նիստի օրակարգը՝
1. Օրակարգը հաստատելու մասին:

Համայնքի ղեկավար՝ Կ. Հովհաննիսյան

2. ՀՀ Արմավիրի մարզի Ալաշկերտ գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի, գրադարանի, երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի և մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքային միավորը և պաշտոնային դրույքաչափը հաստատելու մասին:

Համայնքի ղեկավար՝ Կ. Հովհաննիսյան

3. ՀՀ Արմավիրի մարզի Ալաշկերտ գյուղական համայնքի վարչական տարածքում 2015 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և հաստատելու մասին:

Համայնքի ղեկավար՝ Կ. Հովհաննիսյան

4. Դիմումների քննարկումը:

Համայնքի ղեկավար՝ Կ. Հովհաննիսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԶԱՏՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ
3. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՍԱՆ
5. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԵՎԱՐ

Համայնքի ղեկավար՝ **ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ալաշկերտ, (091) 424045, (098) 42404, alashkert.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014թվականի N 37

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԳՐԱԴԱՐԱՆԻ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ-Ի և ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով և նույն հոդվածի 8-րդ կետով.

1) Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Ալաշկերտ գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի, գրադարանի, մանկապարտեզ ՀՈԱԿ-ի և երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը .

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	Համայնքի ղեկավար	1	198.200
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	143.500
	ԱՇԽԱՏԱԿԱԶՄ		
1	Աշխատակազմի քարտուղար	1	141.200
2	Գլխավոր մասնագետ	1	139.200
3	Առաջատար մասնագետ	2	87.650
4	1-ին կարգի մասնագետ	1	85.400
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
1	Գործավար	1	66.140
2	Հավաքարար	1	66.140
3	Պահակ	1	66.140
4	Խորքային հորի պատասխանատու	1	66.140
Ընդամենը			1147360

ԳՐԱԴԱՐԱՆ

1	Գրադարանի վարիչ	1	66.140
Ընդամենը			66.140

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ

1	Տնօրեն	1.4	66.140
2	Դաշնամուրի դասատու	1	66.140
3	Դաշնամուրի դասատու	1	66.140
4	Շվի, դուդուկի դասատու	0.6	66.140
Ընդամենը			264.560

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	Տնօրեն	1	93.000
2	Դաստիարակ	2.24	92.600
3	Երաժշտական ուսուցչուհի	0.5	92.600
4	Դայակ	2	66.140
5	Խոհարար	1	66.140
6	Խոհարարի օգնական	0.5	66.140
Ընդամենը			578.214

2) Համայնքի ղեկավարի աշխատավարձը սահմանել 198.200 ՀՀ դրամ:

3) Սույն որոշման կատարման սկիզբ համարել 2015 թվականի հունվարի 1-ը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԶԱՏՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ
3. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԵՎԱՐ

Համայնքի ղեկավար՝ **ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ալաշկերտ, (091) 424045, (098) 42404, alashkert.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014թվականի N 38-Ն

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, << Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և << Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1. Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնքի վարչական տարածքում 2015 թվականի համար Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԶԱՏՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ
3. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԵՎԱՐ

Համայնքի ղեկավար՝ **ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի
N 38-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ երեք հազար դրամ

2) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ութ հազար դրամ

գ.. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տաս հազար դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հինգ հարյուր դրամ

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝մեկ հազար դրամ

2 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3)նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա,«Տեղական տուրքերի և վճարների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար « Տեղական տուրքերի և վճարների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մեկ հազար դրամ

Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ հինգ հազար դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ վեց հազար դրամ

Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել տաս հազար դրամ:

Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ.

Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24 ^{00}-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար հիսուն հազար դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝ մեկ հարյուր հազար դրամ

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավել ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ հինգ հարյուր դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ

Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հազար դրամ.

Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ մեկ հազար դրամ.

Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ.

Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազ

ՏԻՄ-ի կողմից մրցույթների և աճուրդների հետ կապված մասնակիցների վճար սահմանել երեք հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՇԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ալաշկերտ, (091) 424045, (098) 42404, alashkert.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014թվականի N 39

ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով՝

1. 10-7-1 բաժին խումբ դասի 47-29 տնտեսական հողվածին գումար չլինելու պատճառով Ալաշկերտ համայնքի բնակիչ Օֆիկ Խուրշուդյանի դիմումը մերժել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԶԱՏՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ
3. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԿԱՐՊԵՒԱՐ

Համայնքի ղեկավար՝ ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ